

Ա. Ա. Ստառյան

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԵՎ Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻ «ՆՈՐ ԱՌԱՎՈՏ» ՊՈԵՄԸ

1

Գոմունիստական պարտիայի տնօրենի զործիչ, Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ ու գինակից Ստեփան Շահումյանի բազմակողմանի, հարուստ գործունեության մեջ նշանակալից տեղ է գրավում առաջավոր գրականության ու արվեստի զարգացման համար նրա մղած պայքարը:

Ծնված լինելով մարքսիստական թեորեթիկական մեծ պատրաստականությամբ, Շահումյանը ակնհայտորեն հեղինակություն էր գրականության ու արվեստի բնագավառում: Եւ, թէ որպէս բոլշևիկյան պարտիայի ակադեմիկոս գործիչ և թէ որպէս մարքսիստ-գրականագետ, գաղափարական դեկլամարի գեր է կատարել հայ պրոլետարիատն պրականության սկզբնավորման ու ձևավորման, նրա հետագա զարգացման պատմության մեջ: Շահումյանի անսուր սկզբից և եթ ամենասերտ կերպով կապված է այդ պատմության հետ:


Այդ ամենացայտուն կերպով արտահայտվում է այն սրտագին բարեկամությամբ, որով կապված էին իրար հետ Կոմունիստական պարտիայի մեծանուն գործիչ Ստ. Շահումյանը և հայ պրոլետարիատն գրականության հիմնադիր, բոլշևիկ-բանաստեղծ ու ռեյոլյուցիայի անձնվեր մարտիկ Հ. Հակոբյանը:

Կարելի է ասել, որ այնպիսի լուրջ ուշագրություն ու հոգատարություն, ինչպիսին ցուցաբերում էր Վ. Ի. Լենինը պրոլետարիատն մեծ արվեստագետի՝ Մ. Գորկու կյանքի ու ստեղծագործության նկատմամբ, Շահումյանը ցուցաբերում էր Հակոբյանի նկատմամբ:

Շահումյանը վճռական դեր է կատարել Հակոբյանի ստեղծագործական կյանքում, ոչ միայն գաղափարական-քաղաքական թշնամիների (սպեցիֆիկների, զաշնակների և մյուսների) կատաղի հարձակումներից պահպանելու, ոչ միայն նրա ստեղծագործության գնահատման խնդրում, այլև Հակոբյանի արվեստի բուրժուացման, գաղափարական խորացման ու բյուրեղացման գործում:

Ժամանակին այդ խոստովանել ու երախտողիտական պայքարն արել նշել է ինքը բանաստեղծը՝ գրելով, որ Շահումյանի, որպէս մարքսիստ գրականագետի, խոսքը հեղինակություն էր թէ իր և թէ շատ շատերի համար:

Ստեփան Շահումյանը, որպէս մարքսիստ քննադատ, որպէս կախարհական մի ու մի, քիչ տգիտություն չի ունեցել իմ գրական հետադադրությունների վրա: ...Որքան Ստեփանի համակները, նույնքան նրա հետ ունեցած կենդանի խոսակցությունը ոչ պակաս արժեքավոր էր ինձ



համար...¹ — գրել է Հակոբյանը Շահումյանի գրականագիտական գործունեությունը բնութագրող իր հոդվածում:

Մի այլ առիթով, երախտապես բանաստեղծը, վերհիշելով իր մեծ բարեկամի ու ընկերոջ հետ ունեցած սրտագին հանդիպումները պարտիայի լոնդոնյան՝ 5-րդ համագումարի (1907 թ. մայիս) նախօրեին ու հետո, Շահումյանի, որպես ուսուցիչների, բնութագրի մեջ շեշտում է նաև նրա ջերմ ընկերասիրությունն ու կենսուրախ բնավորությունը²:

Հակոբյանը մի շարք հոդվածներում, ինչպես նաև ինքնակենսագրություններում բազմիցս անդրադարձել է իր անմահ բարեկամի ու սրտագին ընկերոջ կյանքին ու գործունեությանը և միշտ խորը ջերմությամբ վերհիշել իր հանդիպումներն ու զրույցները նրա հետ:

Շահումյանի, որպես ուսուցչի այլ անխոնջ մարտիկի, որպես պարտիայի աննկուն գործչի, նվիրական կերպարն իր անդրադարձումն է գտել պոետի գեղարվեստական ստեղծագործության մեջ ևս, ուր հուզաթաթափ էջեր կան, նվիրված Շահումյանին, երբեմն ինքնակենսագրական երանգով: Օրինակ՝ «Թիֆլիս» (1933 թ.) պոեմում Հակոբյանը հուզմունքով վերհիշում է Շահումյանի հետ միասին իր եռանդուն մասնակցությունը ուսուցչի ընդհատակյա գործունեությանը:

...Իսկ չեմ պարծենում, խոստովանում եմ միայն հիացրով,
Որ Շահումյանի ու Միխայիլ հետ աշտեղ, հրճանքով
Գործել եմ և ես գետնահարկերում³...

2

Շահումյանի և Հակոբյանի զաղափարական բարեկամության մի նշանակալից էջն է կազմում Շնոր առավոտ» պոեմի ստեղծագործական պատմությունը:

Հակոբյանի ստեղծագործության մեջ՝ ընդհանրապես և լեռն առավոտ» պոեմում՝ մասնավորապես, գեղարվեստորեն պատկերվում է հենց այն, ինչ որ կենտրոնացնում և անդրադարձնում է իր մեջ տվյալ էպոսայի ամբողջ իմաստը, այն է՝ ամենաուսուցիչի գասակարգի սոցիալական ճնշվածությունը և նրա ազատագրական պայքարը շահագործման սխտեմի դեմ՝ հանուն սոցիալիզմի, հանուն կոմունիզմի:

Պոեմի Շնոր առավոտ» խորապես արտահայտիչ վերնագիրը բացահայտում է հեղինակի հիմնական նպատակն ու զաղափարը՝ ցույց տալ, թե ուրեքից է բացվելու Վարդաշ մարգկություն» ազատ կյանքի արշալույսը: Այն բացվելու է գործարանային բանվորական աշխարհից, — պատասխանում է ուսուցչի բանաստեղծն իր նշանավոր պոեմում:

Ստոլիպինյան ուսուցչի մոռյալ տարիների խավարի մեջ, ի հակադրություն գեղադեմոստական — անկումային գրականության, Հակոբյանն այս պոեմով և իր Վրոսաբացի երգերով ժողովրդի նոր կյանքի այգարացն է

¹ «Մարտակոչ», 1952, № 218, Հ. Հակոբյան, Ստ. Շահումյանը որպես գրական քննադատ:

² Հ. Հակոբյան, Ագիտատորի հուշերից (Պատմվածքներ հեղափոխականների կյանքից), 1927, էջ 8:

³ Միխա Յիսակյան:

⁴ Հ. Հակոբյան, Երկեր, «Թիֆլիս», 1951, էջ 287:

սպառնալից էր: Հակոբյանի ստեղծագործության հերոսը մարդկության ազատ կյանքի «հմայք բանալին» տեսնում է գործարանային բանվորի ստեղծարար ձեռքում: Հանձին պրոլետարիատի, բանաստեղծը սպառնալից է հասարակության ուղղություն վերափոխման, մարդկության սոցիալիստական վերածննդի հզոր ուժը: Ահա թե ինչու կոմունիստական պարտիայի մեծանուն գործիչներ Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանը խնդրում են Կոմունիստական անվանի բանաստեղծին և ըստ արժանվույն գնահատելին նրա այս նշանակալից երկը:

Այն տարիներին, երբ հայ բուրժուական-նացիոնալիստական քննադատությունը (սպեցիֆիկները, դաշնակցականները և «մաքուր արվեստի» քուրմերը) կատաղի հարձակումներ էին սկսել Հակոբյանի դեմ, այդ պայմաններում, Շահումյանի ու Սպանդարյանի և պոետի գաղափարական մյուս բարեկամների գրվածական խոսքը մեծ իրախուսանք ու զորավիգ էր ուղղության անձնվեր երգչի համար:

* * *

«Նոր առավոտ» պոեմի առաջին գնահատողը և առաջին քննադատը եղել է Ստ. Շահումյանը դեռ այն ժամանակ, երբ պոեմը «Գեղարվեստ» հանդեսում տպագրվելուց հետո նոր էր լույս տեսել առանձին գրքույկով (1910 թ.):

Հակոբյանը գրում է, որ չատերը գրավոր ու բանավոր արտահայտվելն «Նոր առավոտ»-ի վերաբերյալ, «բայց ճշգրիտ, ամենից ճշգրիտ, առավել անկեղծ ու շիտակ, ամենից լուրջ ու շարժական առավել «Նոր առավոտ»-ը մի այնպիսի դժգոհություն, խորաթափանց հոգի, ինչպես գեղարվեստական գրականություն սիրող թանկագին Ստեփան Շահումյանը: ...Նա այդ սքանչելի մարդը... ամենից առաջ մի նամակ գրեց, որի մեջ ասում էր:

«Պոեմդ,—«Նոր առավոտը» շատ գեղեցիկ գործ է. դու շատ լավ մարմնավորել ես քո հիմնական մտքերն ու իդեաներն այնտեղ և անկասկած տվել բանաստեղծական սպառնալիքներ...»¹:

Մի այլ հոգվածում Հակոբյանն ասում է, որ «Առանձին գրքույկով հրատարակված պոեմիս մի օրինակը, առանց մակագրության անգամ, ուղարկել էի Ստեփանին² ու մի նամակով էլ խնդրել իր կարծիքը, իր դի-

¹ Ստ. Շահումյան, Երկեր, էջ 355:

² Հակոբյանն իր պոեմի այս առաջին հրատարակությունից ուղարկում է նաև այն ժամանակ արտասահմանում գտնվող իր բարեկամ Միխայիլ Յակոբյանին ու նրա միջոցով Մաքսիմ Գորկուն, որ ապրում էր Կապրի կղզում: Այդ մասին տեղեկանում ենք Ժնևից, Միխայիլ Յակոբյանի հետևյալ բացիկից, գրված 1911 թ. փետրվարի 26 (14)-ին:

Մ. Յակոբյան գրում է.

«Дорогой Акон! Здравствуй и много тебе от меня братских поцелуев. Твое письмо получил, очень понравились, после написав... получил только пять экземпляров „Нор Аравот“. Сделал надписи „по поручению автора“, и сегодня же отправляю... Максиму Горькому,—передаю здешним двум библиотекам... и пятый экземпляр, тоже, „по поручению автора“,—дарю моему одному другу, который тебя знает и много раз прислал тебе поклонны...»

Жму крепко руки, Мича».

(Գրական թանգարան, Հակոբյանի արխիվ, № 801: Մ. Յակոբյանի բացիկը):

տողությունները հայտնելու անդրանիկ պոեմիս մասին: ...Շնոր առավոտ»-ի սյունակներում ու բացատրությունում նա մեծ ուշադրություն դարձրեց ու խնամքով ամենամանրակրկիտ կերպով իր գիտողություններն, իր կարծիքներն ու իր գնահատումներն էր նշանակել քիմիական մատիտով: Նրա թափանցող և լուրջ տեսողությունից չէր վրիպել անգամ կետադրությունը, տառասխալներն անգամ նշված էին, փոստով վերադարձված գրքույկիս լուսանկարներում:

«...Թանգ է ինձ համար այդ գրքույկը... Թանգ է մանավանդ նրա համար, որ իր դրական կարծիքների ու գնահատումների հետ միասին Ստեփանն այդտեղ ցուցադրում է պոեմիս և՛ առավելությունները, և՛ թերի կողմերը: Թանգ է ինձ համար այդ գրքույկը, և ես հրան աչքիս լույսի պես պահում եմ, ահա լրիվ 15 տարի»¹:

Արդ, տեսնենք, թե Հակոբյանի պոեմում Շահումյանը կոնկրետ ինչն է համարում ու նշել որպես առավելություն, և ինչ թերություններ ու չհաջողված տեղեր նկատել, որ հաշվի է առել պոետը՝ կատարելով համապատասխան փոփոխություններ պոեմի հետագա հրատարակություններում:

Բանաստեղծի կենդանության օրով Շնոր առավոտ»-ն ամբողջապես կամ հատվածաբար հրատարակվել է յոթ անգամ², ըստ որում, գրեթե ամեն դեպքում նախորդի համեմատությամբ զգալի բարեփոխությամբ, որ կատարվել է հիմնականում Շահումյանի գիտողությունների համաձայն: Պոեմի տարբեր հրատարակությունների, մասնավորապես 1910 թ. առանձին գրքույկով և 1912 թ. ժողովածուում տպվածների համեմատությամբ ցույց է տալիս, որ Շահումյանի գիտողությունները շատ մեծ նշանակություն են ունեցել Շնոր առավոտ»-ի հետագա մշակման ու լավացման համար: Կարելի է ասել, որ կա Շնոր առավոտ»-ի մոտ չորս վարիանտ, որոնք իրարից տարբերվում են ոչ միայն առանձին գլուխների ու հատվածների մշակումով, այլև ընդհանուր ծավալով:

Շահումյանի գիտողությունները կարելի է խմբավորել այսպես.

ա) Դրական-գրվատական բնույթի գիտողություններ ու նշումներ պոեմի առանձնապես հաջողված մասերի ու տեղերի վերաբերյալ:

բ) Քննադատական-բացասական բնույթի գիտողություններ պոեմի լեզվի, ոճի ու նրա վերամշակման անհրաժեշտության վերաբերյալ:

Շահումյանը, բացի այն, որ ընդհանուր առմամբ Շնոր առավոտ»-ը նշանակալից բանաստեղծական երկ է համարում և բացառիկ նորություն

¹ Հ. Հակոբյան, Ստեփան Շահումյանը որպես գրական քննադատ, Մարտիկոշ, 1925, № 218:

² Շնոր առավոտ»-ի այդ օրինակը Ս. Շահումյանի գիտողություններով առաջին անգամ հրատարակվել է «Սովետական գրականություն» ամսագրում, 1941, № 9—10, էջ 117—128, բնկ. Գ. Հովնանի հակիրճ նախաբանով:

³ Շնոր առավոտ»-ի հրատարակությունները հեղինակի կենդանության օրով.

ա) «Գեղարվեստ», 1909 թ., № 3, էջ 75—80:

բ) Առանձին գրքույկով, 1910 թ., էջ 24:

գ) «Բանաստեղծություններ», 1912 թ., էջ 97—124:

դ) «Հեղափոխական բեմ», 1922 թ., էջ 27—32 (հատվածներ՝ 7—8 և 9-րդ գլուխները):

ե) «Բանաստեղծություններ», հ. 1-ին, 1928 թ., էջ 159—175:

զ) «Բանաստեղծություններ», 1935 թ., էջ 157—170:

է) «Լ'նտիր երկեր», 1938 թ., էջ 85—104:

հայկական պոեզիայում, դրա հետ միասին նա հիացմունք է արտահայտում նաև պոեմի առանձին հատվածների նկատմամբ, որպես բանաստեղծորեն շատ հաջողված կտորներ:

Պոեմի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ գլուխները առանձին մասերի նկատմամբ Շահումյանն իր հիացմունքը նշել է՝ «գեղեցիկ է մանավանդ իմաստով», «լավ է», «սա էլ գեղեցիկ է» «համեմատաբար բանաստեղծական է. ևս չեմ պատահել այդ տեսակ համեմատության», «շատ լավ է» և այլ արտահայտություններով:

Իներենք մեկ երկու օրինակ, որ ցույց են տալիս ոչ միայն Հակոբյանի ստեղծագործական ուժը, այլև իր՝ Շահումյանի գեղարվեստական ճաշակը՝

Նկատելի է, որ Շահումյանին դուր են եկել մեծ մասամբ պոեմի լիրիկական հատվածները, որոնք հատկանշվում են խորը, էմոցիոնալ լիցքով, այն առողջ կենսազգացողությամբ, որ բանաստեղծը մարմնավորում է ինքնատիպ պատկերավորությամբ:

Եվ ինչ է կյանքը... մի երդ դրություն,
Որ կրկնվում է հիստերանշ, թովիչ
Եվ էջներով, եղանակներով,
Որը հնչում է այնպես զրավիչ
Ու մարում ցավի արձագանքներով...
Կյանքը մի նկար, որը հյուսվում է
Հազար գույներով, հազար ցուքներով,
Կյանքը հսկա ծով, որ փոթորկում է,
Նավեր խորտակում ու վերջը մնում
Մենակ ու տխուր իրա խոհերով:
Ահա իմ մուսան տեսնում եմ նորից
Տանջված անցյալի ծանր երկունքից
Պոետիս ծնեց կյանքի նոր զարուն
Մի պատկեր սիրուն,
Պատկեր մի կույսի, որին շատ վաղուց
Որոնում էի, բայց չէի գտնում,
Նա մի իդեալ, որին հինավուրց
Եվ տեսնում էի, և չէի տեսնում,
Որին ես ձգտում, բայց չէի հասնում...

Այս հատվածի առաջին երկու քառյակի մասին (եվ ինչ է կյանքը... տողից մինչև «Կյանքը հսկա ծով...» տողը ներառյալ) Շահումյանը պոեմի լուսանցքում նշել է գեղեցիկ է մանավանդ իմաստով, ավելի լավ կլիներ, որ վերջումն էլ «ցավի արձագանքները» չլինեին, որ կյանքը միայն երգ, նկար ու հսկա ծով ու փոթորիկ լիներ²: Իսկ մնացած մասի համար ձախ լուսանցքում նշել է՝ «մույնպես», այսինքն՝ «նույնպես գեղեցիկ» է:

Պոեմի երրորդ գլխից Շահումյանին առանձնապես դուր են եկել հետևյալ տողերը, որոնցում բանաստեղծն իր սիրած աղջկա հրապույրը, նրա գեմքի գեղեցկությունն է պատկերում ինքնատիպ մետաֆորներով ու համեմատաբարություններով:

¹ Այս և հետագա մեջբերումները կատարում ենք «Նոր առավոտ»-ի 1910 թ. հրատարակությունից:

² «Մովսեսական զրականություն», 1941, № 9—10, էջ 118:

...Քո հրապույրն եմ ես միայն զգում,
 Կյանքի արեր իրա իմաստով
 Զղում եմ, աչքիս հմայք է առնում
 Ու շոյող, անուշ մի ճառագայթով
 Հավում ու կորչում իմ հոգու խորքում.
 Աչքերդ կարծես տեսնո՞ւմ ծածկված
 Մի աղբյուր լինի՞, որ ուղի բացած
 Տերեւի տակե՞ց զնում է, հոսում,
 Նայում երեսիս, սրտիս հետ խոսում:

Ընդգծելով տերեւով ծածկված մի աղբյուր լինի՞ մետաֆորիկ ար-
 անայտությունը, Շահումյանը գրքույկի ձախ լուսանկարում նշել է. «Հա-
 մեմատությունը բանաստեղծական է, ես չեմ պատահել այդ տեսակ համեմա-
 տության»¹ րայց, ավելացնում է նաև՝ «նայում» խոսքի տեղ ես կասեմ՝
 քափվում երեսիս»:

Գրեթե ամբողջովին, միայն մի քանի տողի բացառությամբ՝ Շա-
 հումյանին շատ է դուր եկել պոեմի 7-րդ գլուխը, որն սկսվում է «Գնանք
 գործարան» արտահայտու ի յամբ և այնուհետև տրվում է գործարանի ընդ-
 հանուր նկարագիրը գունեղ պատկերավորությամբ:

Այստեղ գործարանի անհրապույր պատկերն ավելի ցայտուն դարձնե-
 լու համար, բանաստեղծը դիմում է հակադրության միջոցին.

— Գնանք գործարան...

Բայց լսիր ասեմ, սիրելի ընկեր,
 Որ չկան այնտեղ ծառ ու ծաղիկներ,
 Բազեղ ու խոտեր,
 Հավքերի նվազ, գուլ-դուլ աղբյուրներ
 Եվ ոչ ալ վարդեր.
 Զես տեսնիլ այնտեղ լուսնյակ գիշերի
 Հուսաշաղ ամպեր...
 ...Գեղախոս թռչնոց երգի փոխարեն
 Կրկես այնտեղ
 Ճախարակների ոնգային որոտ,
 Եվ խենթ փոկերի համեղ հանգ.
 Այնտեղ խեղդում են շողու ամպերեն,
 Պաղ աղբյուրի տեղ՝ քրտինք ամեն օր.
 Վարդի փոխարեն
 Ծորում, քամվում է արյուն սրտերեն
 Եվ շուրջը բոլոր
 Շոինդ ու ժխոր...
 Կտեսնես ինչպես թանձրացած մխով
 Ծխնելույզները
 Երկինք են կառչել ազահ երախով
 Մորտ պնչերը,
 Կարծես հրաշունչ վիշապի նման
 Ուղում են շնչել
 Ու իրենց քարշել
 Անհուն բարձունքից փայլուն աստղերը,
 Որ նրանց թաղեն մշուշ—ծխի մեջ,
 Կտեսնես շարված սգավոր ու խեղճ
 Արհեստանոցի աղյուս պատերը
 Խոնավ ու թաց-թաց,
 Կարծես բանվորի ֆրեմիով քրշված:

¹ Ընդգծումները Շահումյանինն են:

Այս ամբողջ հատվածի աջ և ձախ լուսանյութերում Շահումյանը հաջորդաբար նշել է «լավ է», «գեղեցիկ է» և «երջում շատ լավ է»,¹ ընդգծելով նաև վերջին տողը:

Պոեմի 8-րդ և 9-րդ գլուխներում նույնպես մի շարք հատվածներ լուսանյութից ուղղահայտ գծելով՝ Շահումյանն իր կարծիքն արտահայտել է՝ «լավ է», «ընդհանրապես գեղեցիկ է», «գեղեցիկ է» «լավ է», «հազարն ինչպես մեկ, մեկն ինչպես հազար — գեղեցիկ է» հիացական-զրվատական նշումներով:

Այս ժլատ, բայց շատ արտահայտիչ նշումները Հակոբյանի ստեղծագործական հաջողությունների գնահատականները լինելով, միաժամանակ, բառահայտում են անվանի բուլշևիկի գրական-գեղագիտական ըմբռնումները, այսինքն այն, թե ինչն է նա համարում բանաստեղծորեն գեղեցիկ՝ մասնավորապես գործարանային-բանվորական աշխարհի պատկերմանը նվիրված այնպիսի մի երկում, ինչպիսին Շնոր ատավոտն պոեմն է:

* * *

Շահումյանը միաժամանակ նշում է այն լուրջ թերությունները, որ ուներ պոեմն իր առաջին հրատարակությունում (1909—1910 թթ.):

Վերևում ասացինք, որ Շահումյանի քննադատական դիտողությունների մի խումբը վերաբերում է պոեմի լեզվին ու ոճին: Շահումյանը որպես թերություն նշում է առանձին գեպերում արևմտահայ գրական լեզվի ու գրարարի բառաձևերի գործածությունը, լեզվական ու ոճական անհարթություններ, չմշակված տեղեր ու անորոշություններ:

Ահա, օրինակ, պոեմի երրորդ գլխում Շահումյանն ընդգծել է նախավերջին հինգ տողերից 2-րդն ու 3-րդը, ուշադրության առնելով հանգավորման արհեստականությունը արևմտահայ լեզվաձևի օգտագործումով:

Բանաստեղծն ասում է, որ իր սիրունու աչքերը հմայում ու տանում են

«Գաղտնի մի աշխարհ, ուր եթե հոգին՝
Երջանիկ զգալու ու շուտ մահանալ՝
Ոչ մի ավստսանհ չէր առաջանալ»:

Այդ տողերի կողքին լուսանյութում Շահումյանը նկատում է.

«Ինչ է նշանակում՝ ո՞ւմ մեջ չէր առաջանա ավստսանք»:

Դարձյալ ընթերցման համար ասել են «առաջանալ» — հոսանքական խառնուրդ ոճի մեջ, հուրդինյանն էլ է թույլ տալիս այդքան:

Պոեմի առաջին հրատարակության մեջ անձնական գերանունները և հոգնակի թիվը մի շարք տեղերում գործածված են գրաբար ձևով, ժամանակակից գրական աշխարհաբար ձևի հետ միասին, օրինակ՝ «որ իմ հոգին է նրա մեջ ապրում», բայց նաև՝ «որ իմ և նորա հոգու ծալքերում» կամ՝ «նորա սուգն է սրտիս...» և կամ «նորա ծնունդ են մի այլ աշխարհի» նորա պիտի ապրեն մարդկության համար՝ կամ՝ «գեղախոս թռչնոց երգի

¹ Մովսեսական գրականություն, 1941, № 9—10, էջ 124:

² Նույն տեղում, էջ 120, Շահումյանի այս նշումը շատ արժեքավոր է, մասնավորապես, որ վերաբերում է նաև Շ. Կուրդինյանին, որքան մեզ հայտնի է միայն այս դիտողության մեջ է գրավոր կերպով արահայտված Շահումյանի կարծիքը Կուրդինյանի մասին:

փոխարենն և այլն: Նկատելով լեզվաձևերի այդ խառնուրդը, Շահումյանը պոեմի երկրորդ գլխի աջ լուսանցքում նշել է. «նորա, սորա» չեն գործածում այժմ, այլ՝ նրա, սրա և այնուհետև պոեմում հանդիպած բոլոր «նորա», «սորա» ձևերի օ-երը՝ փոխելով ջնջել է¹:

Հետևելով Շահումյանի խորհրդին՝ Հակոբյանն իր պոեմի հետագա հրատարակություններում վերացրել է այդ արխայիկ ձևերը՝ գործածելով՝ նրա, նրանք և այլն:

Պոեմում երկրորդ գլխի սկզբում ասված է.

...Որ իմ և նրա հոգու ծալքերում
կա մի հարազատ իրար նման դիժ,
Խորը ակոսված միապես ցավից...

Ընդգծելով «միապես» բառը, Շահումյանը լուսանցքում ուղեկցել է. «Это наречие к слову *ակոսված*, а ты хотел как прилагательное к слову *ցավից* (միևնույն *ցավից*)»²:

Պոեմի 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ գլուխների լուսանցքներում կան մի շարք նշումներ ու գիտողություններ հայերեն ու ռուսերեն լեզվով. «Լավ է հնչում. բայց երկիմբը ինչպես կարող է իր մեջ օվկյան ամփոփել. երկնքի տեղ ավելի լավ կլիներ. որ ուրիշ խոսք լիներ». «Բ՛նչ է նշանակում. լավ չի արտահայտված»³ կամ՝ «ոճը անկանոն է», «լավ չէ. միտքը անհասկանալի է» և կամ՝ «լավ կլիներ ամբողջովին փոխել». «սա լավ է, բայց что к чему? туман Բ՛նչ էս ուզում ասել»⁴, «անհարթ է, нуждается к переделке, не складно». «не складно», «լավ կլիներ փոխել» և այլն, և այլն⁵:

Պոեմի 1912 թ. («Բանաստեղծություններ» ժողովածուում) հրատարակությունը 1910 թ. հետ համեմատած ցույց է տալիս, որ Հակոբյանը Շահումյանի գիտողություններն ու նշումները հաշվի է առել և ըստ այնմ զգալի փոփոխություններ կատարել պոեմի այդ հրատարակությունը պատրաստելիս:

Շահումյանի գիտողությունների համաձայն կատարված փոփոխությունները կիսով չափ նոր տեսք են տվել պոեմին, ըստ որում՝

ա) զգալի չափով հղկվել և ճշտվել են լեզվական ու ոճական տեսակետից շատ անհարթ, անորոշ՝ տեղ-տեղ էլ խմսատու սխալ տեղերը.

բ) առանձին գլուխներ մասնակիորեն, իսկ մի քանիսն էլ հիմնովին վերամշակվել ու նորոգվել են (ինչպես օրինակ՝ 5-րդ, 11-րդ, 12-րդ գլուխները).

գ) լրացվել է 10-րդ գլուխը (հետագա հրատարակություններում 11-րդ), որն ինչպես «Գեղարվեստ»-ում, նույնպես և 1910 թ. հրատարակության մեջ

¹ Ավելորդ չէ նկատել այստեղ, որ այդ ձևերի գործածությունը կարելի է հանդիպել նույնիսկ... «Արուս-Ալա-Մահարի» պոեմում՝ «Գեղարվեստի» մեջ հրատարակված հատվածում (...և՛ նորա խորաթափանց ողին ճանաչեց մարդուն...» և այլն) ու մինչև իսկ Վ. Տերյանի մի քանի բանաստեղծություններում («Նոթա» և այլն):

² Նույն տեղում, էջ 118:

³ Նույն տեղում, էջ 121:

⁴ Նույն տեղում, էջ 122—123:

⁵ Նույն տեղում, էջ 128:

նշված է երեք շաբաթ բազմակետերով, իսկ այստեղ այն տրված է 31 տողանի բանաստեղծությամբ:

Հնարավոր չէ և հարկ էլ չկա այստեղ մանրամասնորեն տալու այդ փոփոխությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչքան շատ է աշխատել պոետն իր ամենասիրելի երկի գեղարվեստական կատարելագործման վրա: Այստեղ մեջ բերենք մի քանի նմուշ այդ փոփոխություններից, որոնք կոնկրետ պատկերացում են տալիս Հակոբյանի ստեղծագործական տեղում թյուն մասին:

1909—1910 թվականների հրատարակություններում պոեմի 5-րդ գլխի վերջին 14 տողի վերաբերյալ, Շահումյանը լուսանցքում նշել է՝ «ТУМАН», իսկ այդ կտորի տողին երկու տողի վերաբերյալ հարցրել՝ «Ի՞նչ ես ուզում ասել»: Շահումյանի նկատողությունն ու հարցը այն արդյունքն են ունեցել, որ բանաստեղծը հիմնովին վերափոխել և նոր ձևով է արտահայտել իր միտքը՝ սկզբի՝ գերազանցապես դատողական ու պրոզայիկ և մշուշապատ 14 տողի փոխարեն տալով ցայտուն մետաֆորներ ու համեմատություններ պարունակող 8 տող:

Սկզբում եղել է այսպես.

Եվ ասա, միքե մի-մի տեսիման
Առաջ բերանալ կյանքի չէ հեռն¹.
Միշտ ձգտել հառաջ, մտնել նոր աշխարհ
Ապրել ու տանջվել շատերի համար
Մի՞թե ամենիս չէ նշանաբան:
Բայց ոստնել մի տեղ անխորհուրդ, անել,
Մի սովորական պարերգ կատարել
Կամ թե սովառնել ցնորք—եթերում
Առանց ցնցումի, առանց սարսուռի.
Վերից սպասել մարդկանց փրկություն,
Առանց միտք զառդ, հուզող տենչերի—
Ա՛յ իմ սիրելի,
Ձէ ծնվել այդպես ոչ մի գաղափար,
Ծվ ոչ մարդկության ծաղկել պատմություն²:

Այս 14 տողերի փոխարեն տրված է հետևյալ 8 տողը, որոնք ավելի արոշակի և ավելի պատկերավոր կերպով են արտահայտում բանաստեղծի միտքը և ավելի թեթևասուն են

Ա՛հ, այն աշխարհում կա մի ճանապարհ
Անձուկ ու փշոտ,
Ուր եթե գնաս՝
Քեզ պիտի շողի ոսկի առավոտ.
Նա չէ մի երազ,
Սիրելի բնկեր, և ոչ սին պատրանք.
Նա խոստանում է քեզ իրական կյանք.
Ինձ՝ նոր առավոտ...³:

¹ Ինչգծու ֆեերը Շահումյանին են:

Այս տողերի դիմաց, լուսանցքում հարցական նշան դնելով, Շահումյանը հարցնում է. «Ի՞նչ ես ուզում ասել»:

² 1910 թ. հրատարակություն, էջ 14, նույնը և «Գեղարվեստ», 1909, № 3, էջ 77—78:

³ «Բանաստեղծություններ», 1912, էջ 109—110:

Բերենք մի օրինակ ևս. պոեմի 11-րդ (հետադասում՝ 12-րդ) գլխի 27-րդ տողից հետո մինչև վերջը, Շահումյանը համարելով մասամբ «անհանալի», անորոշ, մասամբ «нескладно» խորհուրդ է տվել բանաստեղծին վերամշակելու (սլավ է փոխել, գրել է Շահումյանը 23-րդ էջում), եվ Հակոբյանը փոխել է Շահումյանի նշած տեղերը, տալով նոր, ավելի հղկված, որոշակի, զեղարկեստորեն ավելի հոշոդ ձևակերպումներ, ըստ որում հանել է այդ մասից՝ Շահումյանի կողմից «անհասկանալի» և «нескладно» համարված տաս տողը:

Սկզբում եղել է այսպես՝

...Նորան հանգիստ էր միայն հարկավոր,
Գուցե և վաղանց մի կյանք բախտավոր:
« Ես եմ իմացա, որ այն ինչ պիտի
Իրա բնական ճամբով բերասառ
Այդպիսի համար գոյություն չունի
Մի այլ ճանապարհ:
Այն էլ իմացա, որ իդեալին
Եվ գեղեցիկին
Թեև միասին երկուսս ենք ձգտել,
Բայց ամեն մեկս ճարեր հոսանքի.
Կյանքի իմաստը այլ կերպ հասկացել...
Եվ եթե այդպես,
Ինչո՞ւ իմ հոգին կրակվեց այնպես...
Ախ, այդ չիմանանք, որպես մի կատակ» և այլն:

Այս հատվածից անփոփոխ թողնելով սկզբի և վերջի երկուական տողերը, մնացած միջին մասի տողերն ամբողջությամբ հանվել են, այլևս չկան պոեմի 1912 թ. և հետագա հրատարակություններում:

Ասացինք արդեն, որ նախորդ հրատարակություններում (1909 թ. «Գեղարկեստ»-ում և 1910 թ. առանձին գրքույկում) պոեմի 10-րդ (հետագայի 11-րդ) գլուխը նշված է միայն բազմակետերի եռաշարքով: Բայց 1912 թվականի հրատարակության մեջ արդեն լրացված է այն՝ 31 տողանոց բանաստեղծությամբ, որն օրգանապես կապվում է նախընթաց գլուխների, ինչպես և հաջորդ գլխի հետ: Այդ նոր գրված գլուխը շատ կարևոր է պոեմում, այստեղ է, որ բանաստեղծը հիասթափություն է հայտնում քաղքենի կնոջ՝ Ստիլյայի նկատմամբ, որովհետև, Ստիլյան բանաստեղծի որոնած գաղափարական հերոսունին չէ, որին շատ վաղուց երազում էր ու չէր հասնում, և որի հետ մարտիկ-բանաստեղծը վճռել էր անցնել «կյանքի նեղ ուղին»:

Շահումյանի դիտողություններում նշված է, որ շատ անհաջող է մասնավորապես պոեմի վերջավորությունը. «անհասկանալի է», «нескладно» «սլավ չի վերջանում» — գրել է նա պոեմի վերջին՝ 12-րդ գլխի լուսանցքում (1910 թ., էջ 24), զի՞ք քաղելով առանձնապես ամենավերջին քառյակի վրա՝ միանգամայն անիմաստ ու ավելորդ համարելով այն:

Հակոբյանը Շահումյանի այդ դիտողություններն էլ ընդունելով, զգա-

¹ 1910 թ. հրատարակություն, էջ 22, ընդգծումները Շահումյանինն են:

² Հոկտեմբերյան շրջանի հրատարակություններում «կյանքի նեղ ուղին» դարձել է «կյանքի նոր ուղին»: Համեմատել «Բանաստեղծություններ» 1912, էջ 112 և «Բանաստեղծություններ», 1926, էջ 167:

լի չափով վերամշակում է պոեմի վերջավորությունը (12-րդ գլուխը), փորձում է նախկին անորոշ, անիմաստ, անհարթ կտորի փոխարեն՝ պոեմը վերջավորել ավելի հղկված, պարզորոշ և ավելի իմաստային պատկերով, որով և սիմվոլացրել է իր իդեալն ու իր անցնելիք ուղին՝ հակադրելով այն քաղաքենական ինդիվիդուալիզմին:

Պետք է սակայն նկատել, որ Հակոբյանին չի հաջողվել պոեմի այդ գլուխը վերամշակել այնպես, որ նա դառնար իր կառուցած բանաստեղծական շենքի ավարտական ընդհանրացնող վարդի, օրգանապես կապված ամբողջություն հետ:

Այդ անհաջողությունը հետագայում նկատել է ինքը՝ բանաստեղծը և 1912 թ. ժողովածուից հետո, երբ այլևս ավելորդ համարելով վերամշակված 12-րդ գլուխն էլ, այն հանել, կրճատել է և պոեմի հետագա հրատարակություններում այլևս այդ գլուխը չի պահպանվել: Այդ հրատարակություններում պոեմն ավարտվում է սկզբնական վարիանտի (Գեղարվեստ-ում և առանձին գրքույկով՝ 1910 թ. տպվածի) 11-րդ գլխով, որը դարձել է 12-րդ, որովհետև հեղինակը, բացի նախկին 10-րդ (միայն բազմակետերով նշված) գլուխը լրացնելուց, ավելացրել է նաև այժմյան 9-րդ գլուխը (սկսվում է Երպես հարուխի ջեռուն ձուլածո... տողով), որը չի եղել պոեմի նախահոկտեմբերյան շրջանի հրատարակություններում:

Այդ նոր գլուխն իր թե՛ նյութով և թե՛ իմաստով կազմում է օրգանական շարունակությունը նախորդ՝ 8-րդ գլխի, ուր նկարագրվում է բանվորների ստեղծագործական աշխատանքը՝ մետաղագործարանի մեծ ձուլարանում՝ երկաթահանքի ձուլման տեխնոլոգիական պրոցեսի մեջ բանվորի անձնուրաց խիզախությունը, արված է նրա կամքի և հոգեկան ուժի ընդթափում:

Այս նոր հավելումը պոեմի գեղարվեստորեն հաջողված գլուխներից մեկը լինելով, միաժամանակ շատ էական մի մոմենտով լրացնում է ամբողջացում է երկի գաղափարական բովանդակությունը:

Այս գլխում ևս շարունակելով մետաղաձուլման տեխնոլոգիական պրոցեսի նկարագրությունը, բայց միշտ կենտրոնում ունենալով բանվորների հերոսական կերպարը, պոետը միաժամանակ սիմվոլիկ իմաստ է տվել նրանց (բանվորների) ստեղծագործական այդ աշխատանքին՝ ակնարկելով ռեակցիայի շրջանի ընդհատակյա ռևոլյուցիոն աշխատանքը և ռևոլյուցիայի գաղափարի ապագա հաղթանակը:

Որպես հարուխ ջեռուն ձուլածո,
Երկնած գույներում հալոցքն է եռում,
Մարդիկ վտանգի հարայ-հրոցով
Հայացքը դեպի ձևերն են բերում,
Ահա հասել են ձև-կաղապարին:

Այնուհետև Վարպետի խրոխտ հրամանով, մի վայրկյանում տասնյակ բազուկներ լարված մկանունքով՝ ձևերի մեջ են թափում հալքը հուրհրան, Վարմիր հեղուկը հալած չուգունի խլրտում է խենթ հոսանքի նման, Երոցեր են ելնում կրծքիցը հողի, որի խորքում ցանկալի ձևն է օտանում այդ ճհալքը հուրհրան: Ու դրա համար, շարունակում է պոետը՝ այս անգամ պաթետիկ ոճով.

«Ուրախ են մարդիկ ու զոհ են նրանք,
 Որ հուր տանջանքից ծնվեց հաղթանակ.
 Գե՛տնի տակ ձուլված գործը կենդանի
 Իւ գիւղին է առել հողի կաղապար.
 Գործը մարմնացել... կեցցե՛ր զաղաւիւր...»:

Ակներև է, որ բոլշևիկ—պոետը նկատի ունի սյարտիայի ընդհատակյա հերոսական գործունեությունը, երբ սիմվոլադնում է ճհալում չուգունի» կաղապարումը, և հայտարարում է, որ Տգետնի տակ ձուլված գործը կենդանի է:

Այս ամենը խոսում են այն մասին, թե ինչքան մեծ ու վճռական նշանակություն են ունեցել Շահումյանի գիտողությունները Հակոբյանի համար բնագիտական և նրա պոեմի համար մասնավորապես: Ճնոր առավոտի» հետագա՝ 1912 և 1926 ու 1935 թվականներին հեղինակի կենդանության օրով արված հրատարակություններն իրար հետ և ապա, գրանք առաջին հրատարակությունների 1909—1910 թվականներին տպագրվածների հետ համեմատելիս, չի կարելի չնկատել, որ Շահումյանի արժեքավոր գիտողությունների շնորհիվ Հակոբյանը նախահոկամբերյան շրջանի իր այս նշանակալից երկը շատ է հզկել ու բարելավել, հասցնելով զեղարվեստական այն կատարելության, որով Ճնոր առավոտը դարձել է հայկական պոեզիայի նորագույն շրջանի ամենանշանակալից երկերից մեկը, սոցիալիստական ոեալիզմի առաջին ծավալուն երկը հայ գրականության մեջ: